



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 1 » 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000037

Ձեռնարկողը՝

«Արեգ Պյուս» ՍՊԸ

Ք. Երևան, Նորաշխարհյան 5

Գործունեությունը՝

Նորաշենի պեմզայի հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռություն
Կոփայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000037

« 21 » 05 2019թ.

Նորաշենի պեմզայի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկարգություն

Պատվիրատու՝ «Արեգ Պլյուս» ՍՊԸ
 Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկարգություն և կից փաստաթղթեր
 Գործունեության կատեգորիա՝ «Ա»
 Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք

Նորաշենի պեմզայի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Բուժական բնակավայրի վարչական տարածքում: Հանքավայրի մոտակա բնակավայրերից են Բուժականը, որը գտնվում է հանքավայրից 0,9կմ դեպի արևմուտք, հարավում Երնջատափ գյուղն է 1,7 կմ/, հարավ արևելքում՝ Շողակն գյուղն է 2,0կմ հեռավորության վրա, հարավ արևելքում՝ Թեղենիք գյուղն է 6,8կմ հեռավորության վրա:

Նորաշենի հանքային մարմիններից նախատեսվում են շահագործել թիվ 2 և 3 հանքային մարմինները՝ առանձին բացահանքերով: Ելնելով հանքավայրի տեղադիրքից հանքամարմինների տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, մարմինների մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով՝ առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նորաշենի պեմզայի հանքավայրի հայցվող տարածքի սահմանակետերի կոորդինատները.

	ARM WGS-84		Բարձրությունը ծովի մակարդակից, h	WGS- 84	
	X	Y		X	Y
N1 բացահանք					
1	4479233.07	8457340.04	1924	457345.34	4477347.39
2	4479158.00	8457163.00	1917	457168.37	4477272.35
3	4479277.62	8457025.40	1922	457030.83	4477391.92
4	4479466.28	8457057.89	1948	457063.31	4477580.51
5	4479594.25	8457002.45	1954	457007.89	4477708.43
6	4479676.00	8457044.00	1966	457049.42	4477790.14
7	4479704.85	8457075.97	1970	457081.38	4477818.98



8	4479702.67	8457094.13	1965	457099.53	4477816.80
9	4479632.95	8457134.38	1951	457139.76	4477747.11
10	4479505.60	8457234.89		457240.23	4477619.81
N1 բացահանք					
1	4479760.39	8457321.32	2002	457326,63	4477874.50
2	4479840.79	8457285.15	2004	457290,47	4477954.87
3	4479912.59	8457313.14	2010	457318,45	4478026.64
4	4480112.08	8457448.88	2025	457454,14	4478226.05
5	4480122.67	8457552.70	2026	457557,92	4478236.63
6	4480087.34	8457592.04	2024	457597,24	4478201.32
7	4479978.45	8457589.64	2018	457594.84	4478092.47
8	4479874.36	8457539.17	2015	457544.39	4477988.42

Նորաշենի պեմզայի հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ 26.03.1976թ թիվ 7602 արձանագրությամբ ըստ կարգերի հետևյալ քանակությամբ /հազ.տ/

- հաշվեկշռային պաշարներ A - 131, B - 147, C₁ - 520, C₂ - 73, A+B+C₁+ C₂ = 871,
- արտահաշվեկշռային պաշարներ B - 23, C₁ - 36, C₂ - 7:

Նախագծվող բացահանքերը վերջնական դիրքում կունենան հետևյալ պարամետրերը.

Թիվ 2 հանքային մարմնի բացահանք

Առավելագույն երկարությունը - 610 մ,

Առավելագույն լայնությունը - 260 մ,

Ամենաբարձրադիր և ամենացածրադիր նիշերի միջև տարբերությունը - 25 մ,

Մակաբացման ապարների միջին հզորությունը - 0.2 մ,

Օգտակար հանածոյի միջին հզորությունը - 5.5 մ,

Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 404.3 հազ.մ³,

Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը - 359.83 հազ.մ³,

Մակաբացման ապարների քանակը՝ արտաքին - 15340 մ³, ներքին - 55610 մ³,

Օտարման մակերեսը -10,19 հա:

Թիվ 3 հանքային մարմնի բացահանք

Առավելագույն երկարությունը - 410 մ,

Առավելագույն լայնությունը - 210 մ,

Ամենաբարձրադիր և ամենացածրադիր նիշերի միջև տարբերությունը - 25 մ,

Մակաբացման ապարների միջին հզորությունը - 0.2 մ,

Օգտակար հանածոյի միջին հզորությունը - 8.9 մ,

Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 499.08 հազ.մ³,

Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը - 444.1 8հազ.մ³,

Մակաբացման ապարների քանակը՝ արտաքին - 11380 մ³, ներքին - 116800 մ³,

Օտարման մակերեսը - 6.5 հա:

Ընդհանուր մարվող պաշարները կազմում են 903380մ³, արդյունահանվող պաշարները 804010մ³, կորուստները բնամասերում 99370մ³, արտաքին և ներքին մակաբացման ապարները՝ 199 130 մ³:

Բացահանքի արտադրողականությունն ըստ պեմզաների զանգվածի համաձայն տեխնիկական առաջադրանքի ընդունված է /արդյունահանվող պաշար/ 89887.6 մ³/տարի մարվող պաշար: Մակաբացման գործակիցը կազմում է 0,247:

Նախագծվող բացահանքերի տարածքները նախկինում շահագործված են եղել և բացահանքերի անխափան աշխատանքներն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.



- Առաջին փուլում նախատեսվում է շահագործել թիվ 2 հանքային մարմինը:
- Բացահանքի հարավային մասից մինչև բացահանքի 1955մ նիշ ունեցող հանքաստիճանը մուտքային ավտոճանապարհի կառուցում 560մ երկարությամբ, 10մ լայնությամբ, 2120մ³ հողային աշխատանքների ծավալով: Բոլոր հորիզոնների բացումն իրականացվելու է նշված գրունտային ճանապարհից կտրող հորիզոնական կիսախրամների անցկացմամբ:
- 1955մ նիշ ունեցող հանքաստիճանից ապարների հեռացում – 12850մ³, այդ թվում մակաբացման ապարների հեռացում -2370 մ³, այդ թվում 1300 մ³ արտաքին մակաբացման ապարներ, 1070 մ³ ներքին մակաբացման ապարներ:
- Պեմզաների արդյունահանում – 10480 մ³ (ուղեկցող հանույթ):
- N2 բացահանքի /3-րդ հանքային մարմին/ բարձրադիր մասի /2020-2050մ/ հանքաստիճանների բացումը կատարվելու է միջհանքային մուտեցող գրունտային ավտոճանապարհից հաջորդաբար հորիզոնական բացող խրամների անցումով:
- Խորքային մասի /2000 մ, 1995 մ/ հանքաստիճանների բացումը կատարվելու է թեք խրամների միջոցով: Թեք խրամների թեքությունն ընդունված է 10 %: Մշակման համակարգը նույնն է, ինչ որ N2 բացահանքինը /N2 հանքային մարմին/:

Հանքի շահագործման ժամկետը կազմելու է 10 տարի:

Մակաբացման ապարները բացահանքային դաշտի սահմաններում ներկայացված են ժամանակակից հեղեղաբերուկ-ողողաբերուկ բերվածքային ապարներով /արտաքին մակաբացում/ և ներքին մակաբացման ապարներով: Մակաբացման ապարները տեղափոխվելու են բուլդոզերի միջոցով և կուտակվելու են ներքին լցակույտում:

Բացահանքի աշխատանքային հանքաստիճանների մշակման համար ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողմանի մշակման համակարգ, մակաբացման ապարները ներքին լցակույտ տեղափոխելով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

- Աստիճանի բարձրությունը - 5 մ,
- Աստիճանի թեքման անկյունը՝ աշխատանքայինը - 55°, աստիճանը մարելուց հետո - 45°,
- Ընթացքաշերտի լայնությունը - մինչև 10 մ;
- Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը – 20 մ:

Բացահանքում արդյունահանումը կատարվելու է առանց հորատապայթեցման աշխատանքների էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրի միջոցով:

Հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1.6մ³ շերտի տարողությամբ ԶՕ-5122 մակնիշի էքսկավատոր:

Բացահանքից պեմզայի տեղափոխումն իրականացվելու է սպառողի տրանսպորտային միջոցներով, իսկ մակաբացման ապարները դեպի ներքին լցակույտ տեղափոխելն իրականացվելու է բուլդոզերի միջոցով:

Բացահանքերի լցակույտ առաջացնող ապարները 199130մ³ ծավալով ներկայացված են ժամանակակից բերվածքային ապարներով և ներքին մակաբացման ապարներով, որոնք հիմնականում կավավազներ են/ 26720մ³ արտաքին և ներքին մակաբացման ապարներով /կավավազներ/ 172410մ³:

Լեռնաերկրաբանական պայմանները հնարավորություն են տալիս միանգամից ձևավորել ներքին լցակույտ: Աշխատանքային հորիզոններից հեռացվող լցակույտային ապարները T-130 մակնիշի բուլդոզերով կուտակվելու են նույն հանքաստիճանի հատակում:



Արդյունաբերական հրապարակ խմբի ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը փոշենստեցման համար բերվելու է KO-002 մակնիշի ջրցան լվացող ավտոմեքենայով:

Բացահանքերի համար նախատեսված ամբողջ տարածքը հանքի փակման ծրագրով նախատեսվում է ռեկուլտիվացնել և բերել անվտանգ իրավիճակի:

Շահագործման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է ներքին լցակույտի մակերևույթի վերջնական հարթեցում՝ ապարների փոում և հարթեցում:

Տեխնիկական ռեկուլտիվացիայի ընդհանուր ծախսերը կազմում են 2125,1 հազ. դրամ:

Տեխնիկական վերակուլտիվացումից հետո կատարվելու է կենսաբանական վերակուլտիվացում հիդրոցանքի միջոցով:

Ընդամենը 13 հա տարածքի ռեկուլտիվացիոն ծախսերը կկազմեն 17776.7 հազ. դրամ:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոս ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Փոշենստեցման նպատակով ճանապարհներին նախատեսվում է ջրցանում տարվա չոր և շոգ օրերին:

- Մեքենաների աշխատանքի ժամանակ՝ սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ հաճախականությամբ:

- Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին երկու անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում:

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Բուժական քնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Առկա է ՀՀ Արտադրական վտանգավոր օբյեկտների



նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» փորձաքննության դրական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

2. Առաջացած թափոնների կառավարումն (շինադրի, կենցաղային ադրի) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արեգ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Նորաշենի պեմզայի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Զ. Զուռնայան